«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
գիտական խորհրդի՝ 14.04.2017 թ.
թիվ 4 նիստում:
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
գիտական խորհրդի նախագահ,
ոստիկանության գեներալ-լեյտենանտ
Հովի. Վարյան

«____» _____ 2017 թ.

ԿԱՐԳ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ, ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ

1. ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրում միջին մասնագիտական, բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով առարկայական նկարագրի մշակման կարգը (այսուհետ՝ կարգ) սահմանում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրում միջին մասնագիտական, բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով առարկայական նկարագրի հասկացությունը, ներկայացվող պահանջներն ու խնդիրները, որակը, կառուցվածքը, հաստատման ու հրապարակման ընթացակարգը:

2. ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Առարկայական նկարագիրը կրթական ծրագրի պահանջների հիման վրա դասախոսի կողմից կազմվող, առարկայի (մոդուլ) վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն պարունակող սովորողների համար նախատեսված փաստաթուղթն է:

3. ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1 Առարկայական նկարագրի խնդիրներն են՝

ա) սահմանել առարկայի ուսումնասիրման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները, կարողությունները, ունակությունները,

բ) սահմանել առարկայի մուտքային պահանջները,

գ) սահմանել վերջնարդյունքները,

դ) սահմանել ուսումնական առարկայի ժամերի ծավալի բաշխումը,

ե) սահմանել ուսումնական առարկայի տիրապետման մակարդակի գնահատումը:

4. ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԻ ՈՐԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4.1 Առարկայական նկարագիրը պետք է՝

ա) համապատասխանի պետական մասնագիտական կրթական չափանիշների նվազագույն պահանջներին,

բ) բացահայտի ուսումնասիրվող առարկայի բաժինների հերթականությունը,

գ) համապատասխանի գիտության ժամանակակից նվաճումներին և կրթության արդի պահանջներին,

դ) պարունակի դասավանդման արդի մեթոդները,

ե) պարունակի դասընթացի ուսումնասիրման նպատակները:

5. ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

5.1 Առարկայական նկարագրի կառուցվածքային տարրերն են՝

ա) տիտղոսաթերթը,

բ) կրեդիտների, դասաժամերի բաշխման (սովորողների հետ աշխատանքի ձևերը՝ դասախոսություններ, սեմինարներ, լաբորատոր, գործնական պարապմունքներ, կուրսային աշխատանքներ, էսսեներ, տնային հանձնարարություններ, ստուգողական աշխատանքներ և այլն, որոնք նախատեսված են ուսումնական պլանով) և մուտքային նախապայմանների վերաբերյալ տեղեկատվությունը,

գ) համառոտ բովանդակությունը,

դ) տվյալ առարկայի նպատակներն ու խնդիրները,

ե) կրթական ելքային արդյունքները,

զ) գրականության ցանկը (հիմնական և լրացուցիչ),

է) գնահատման բաղադրիչները և կշիռը, սանդղակը, չափանիշները և մեխանիզմները,

ը) այլ տեղեկություններ,
թ) թեմատիկ տրոհման քարտեզը:
5.2 Առարկայական նկարագրի տիտղոսաթերթը պարունակում է՝
ա) առարկայի անվանումն ու դասիչը,
բ) ֆակուլտետի անվանումը,
գ) մասնագիտությունը, առկայության դեպքում՝ նաև մասնագիտացումը,
դ) ամբիոնի անվանումը (էլ. փոստ),
ե) հեղինակի (հեղինակներ) ԱԱՀ, գիտական աստիճանը և կոչումը, կոնտակտային տվյալները (հեռախոսահամար, էլ. փոստ),
զ) ուսումնական տարին և կիսամյակը,
է) համապատասխան կրթական աստիճանը,

6. ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

Առարկայի նկարագիրը հաստատվում է համապատասխան ամբիոնի նիստում: Նկարագիրը (տպագիր և/կամ էլեկտրոնային տարբերակով) սովորողներին պետք է հասանելի լինի մինչև առարկայի դասավանդման մեկնարկին նախորդող շաբաթը: Առարկայական նկարագիրը հրապարակվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի համացանցային կայքում: